

ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ ՏԵՍԱՆԵԼԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ 3

Պատումներ և հայացք Հայաստանի համայնքներից

Ministry of Territorial Administration and Infrastructure of the Republic of Armenia

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC



ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ
ՏԵՍԱՆԵԼԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Պատումներ և հայացք Հայաստանի համայնքներից

3

Երևան, 2021

Ծրագրի մասին

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի նպատակն է ամրապնդել Հարավային Կովկասի հանրային հաստատությունների կարողությունները՝ մատուցելու ավելի որակյալ քաղաքացիակենտրոն ծառայություններ: Ծրագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ազգային, շրջանային և տեղական մակարդակներում գործող գործընկեր հաստատություններին խորհրդատվություն է տրամադրում ազգային բարեփոխումների նախագծման և իրականացման, ընդհանուր պայմանների բարելավման և ստանդարտների ու ուղեցույցների մշակման վերաբերյալ: Այն օժանդակում է առավելապես տեղական մակարդակում քաղաքացիակենտրոն ծառայությունների մատուցման գործում առանցքային դերակատարների կարողությունների զարգացմանը: Տեղական զարգացման գործընթացներում քաղաքացիների մասնակցությունը խթանելու նպատակով Ծրագիրն աջակցում է մասնակցության և բողոքարկման մեխանիզմների ներդրմանը և դրանց վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության բարձրացմանը:

Ծրագիրն աջակցում է նաև շրջանային և տեղական տնտեսական զարգացման ռազմավարությունների և գործիքների մշակմանն ու կիրառմանը: Գերմանիայի Կովկասյան նախաձեռնության շրջանակներում Ծրագիրը նպաստում է Հարավային Կովկասի երկրների միջև մասնագիտական գիտելիքի և փորձի փոխանակմանը:

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիրը «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շարունակությունն է: Այն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ և Հայաստանում համաֆինանսավորվում է Ծվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ԾԶՀԳ) կողմից: Ծրագիրն իրականացվում է հիմնական քաղաքական գործընկերոջ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) հետ սերտ համակարգմամբ:

Հրատարակության մեջ առկա տեսակետներն անպայմանորեն չեն արտացոլում ԳՄՀԸ, ԾԶՀԳ և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

ՊԻԵՌ ԲՈՆԻՖԱՍԻ

Հայաստանյան թիմի ղեկավար

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիր

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն

Դեռևս 2015 թվականին Հայաստանն ուներ տեղական ինքնակառավարման խիստ հատվածական համակարգ՝ ավելի քան 900 համայնքով, որոնք զգալիորեն տարբերվում էին իրենց չափսերով, կարողություններով և ֆինանսական ռեսուրսների բաշխմամբ: Այս համայնքներից շատերում տեղական իշխանությունները դժվարանում էին իրականացնել նույնիսկ իրենց հիմնարար գործառույթները, ինչը հաճախ հանգեցրել է քայքայված հանրային ենթակառուցվածքների, իսկ տեղական ներուժը չի բավարարել եկամուտներն ավելացնելու և սոցիալ-տնտեսական զարգացում ապահովելու համար:

Մի քանի տարվա ընթացքում, Հայաստանում իրականացվող վարչատարածքային բարեփոխման արդյունքում Հայաստանի համայնքների թիվը գրեթե կիսով չափ կրճատվեց: Համայնքների միավորման մի շարք գործընթացների շնորհիվ 465 համայնքներ միավորվեցին 52 միավորված համայնքների կազմում՝ մեկտեղելով իրենց կարողությունները, ռեսուրսները և ի հայտ բերելով իսկապես աննախադեպ հնարավորություններ տեղական տնտեսական զարգացման, ներդրումների ներհոսքի, բարձրորակ հանրային ծառայությունների մատուցման և քաղաքացիների արդյունավետ մասնակցության համար:

Հայաստանի վարչատարածքային բարեփոխման գլխավոր նպատակը տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության համար նպաստավոր միջավայրի ստեղծումն էր և տեղական մակարդակում այնպիսի կենսունակ կառույցների ձևավորումը, որոնք կօգնեն համայնքներին առավելագույնս արդյունավետորեն ծառայել իրենց բնակչությանը: Նոր հիմնված՝ «մեկ պատուհան» սկզբունքով գործող Քաղաքացիաների սպասարկման գրասենյակները, թերևս, կառուցվածքային և կազմակերպական փոփոխությունների ամենաշոշափելի և ամենատեսանելի օրինակներն են: Այստեղ հնարավոր է դարձել մեկտեղել տեղական բնակչության առօրյան դյուրացնող մեծ թվով նորարարական լուծումներ:

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիրը շարունակում է աջակցել միավորված համայնքներին՝ բարելավելու իրենց կառավարչական կարողությունները և առանցքային գործառույթների իրականացումը համապատասխանեցնելու նոր պահանջներին: Ավելին, միավորված համայնքներում էլեկտրոնային կառավարման նորարարական գործիքների ներդրման և ՔՍԳ-ների հիմնման միջոցով ծրագիրը կնպաստի համայնքային վարչարարության արդիականացմանը և ծառայությունների մատուցման կատարելագործմանը: Ծրագրային բյուջետավարման օգնությամբ համայնքները կարող են առավել հեշտությամբ և արդյունքահեն ձևով կառավարել իրենց ծախսերը և դրանց վերաբերյալ դյուրըմբռնելի տեղեկություններ տրամադրել իրենց բնակչությանը: Արդյունքում, տեղական մակարդակում հանրային միջոցների օգտագործումն ավելի թափանցիկ և հաշվետվողական կլինի:

Համայնքներն առաջնային օղակ են նաև տեղական տնտեսական զարգացման համար: Պլանավորման կարողությունների զարգացումը միավորված համայնքներին հնարավորություն կտա մշակել տնտեսական զարգացման իրատեսական ռազմավարություններ, սահմանել առաջնահերթություններ և հատկորոշել տեղական ներդրումային ծրագրերի իրականացման նպատակային ոլորտներ: Ծրագիրը նաև աջակցում է տեղական մակարդակում կին քաղաքական գործիչների կարողությունների հզորացմանը՝ այդպիսով նպաստելով որոշումների կայացման գործընթացում կանանց դերի բարձրացմանը:

Այս գիրքը Ձեզ կտանի Հայաստանի տարբեր վայրեր և կներկայացնի համայնքների արձանագրած հաջողության պատմությունները, որոնք հնարավոր են դարձել քաղաքացիամետ միջամտությունների շնորհիվ: Գրքի վերնագիրը հուշում է, որ իմաստալից արդյունքները հեշտությամբ չեն տրվում. դրանց կարելի է հասնել ու պահպանել միայն «քայլ առ քայլ»՝ տարբեր շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավման և շարունակական նվիրման, պետական և տեղական իշխանությունների միջև արդյունավետ համագործակցության ու գործընկերության և միջազգային դոնորների ու զարգացման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների համատեղ աջակցության միջոցով: Այս հրապարակումը մեկտեղել է հաջողության պատմությունները, տեղական մակարդակում որոշում կայացնողների ու համայնքային մարմինների աշխատակիցների հանրային հայտարարությունները, ինչպես նաև սեփական փորձով կիսվող քաղաքացիների կարծիքները վերջին փոփոխությունների արդյունքում իրենց համայնքում տեղի ունեցած դրական տեղաշարժերի մասին:

Հաճելի ընթերցում:

ԱԿՈՒՆՔ

Կոտայքի մարզի Ակունք համայնքը տեղակայված է Հատիս լեռան ստորոտին՝ Աբովյանից 6 կմ հյուսիս-արևելք, իսկ մայրաքաղաք Երևանից՝ 20 կմ հեռավորության վրա: Համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 1,450 մ բարձրության վրա: Բազմաբնակավայր համայնքը կազմավորվել է 2017 թ-ին համայնքների միավորման արդյունքում: Համայնքը ներառում է Ակունք, Զառ, Զովաշեն, Կապուտան, Կոտայք, Հատիս, Նոր Գյուղ և Սևաբերդ բնակավայրերը: Միավորումից հետո համայնքն ունի ավելի քան 9,000 բնակիչ: Նրանք հիմնականում զբաղվում են հողագործությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ:

Խորհրդային կարգերի փլուզումից հետո այս բնակավայրերում քիչ բան էր փոխվել, մանկապարտեզ ու դպրոց ոչ միայն չէր կառուցվել, այլ նույնիսկ չէր վերանորոգվել եղածը: Այստեղ անգամ կենցաղային տարրական պայմաններ չկային՝ կոյուղագիծ ու կենդանիների համար խմոցներ, խմելու ջուր և աղբահանություն: Եվ միայն վարչատարածքային բարեփոխումների արդյունքում հնարավոր եղավ լուծել գյուղացիների համար անլուծելի թվացող մի շարք խնդիրներ, այդ թվում՝ ջրագծերի, գազի և գիշերային լուսավորության անցկացում, աղբահանություն, ճանապարհների ասֆալտապատում, դպրոցների և մանկապարտեզների վերանորոգում և այլն:

Ակունք համայնքում անցկացվել է գիշերային լուսավորություն և տեղադրվել են LED լուսարձակներ

Կենդանիների համար խմոցներ տեղադրվել են գրեթե ողջ համայնքում

Սուբվենցիոն ծրագրով Ակունք համայնքը ձեռք է բերել աղբատար մեքենաներ, որոնք կանոնավոր կերպով իրականացնում են աղբահանություն համայնքի բոլոր բնակավայրերում

Ակունք համայնքի ղեկավար Հունան Ռուբենյանն է

Ակունք միավորված համայնքի ղեկավար Հունան Ռուբենյանը պատմում է, թե ինչպես համայնքների միավորումից հետո Կառավարությունը լրջագույն քայլեր արեց դրանց զարգացման ուղղությամբ՝ հատկապես սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:
«Միայն 2019 թվականին 7 սուբվենցիոն ծրագիր իրականացվեց համայնքում, 2020-ին՝ ևս 6-ը, իսկ 2021 թվականի համար 11 ծրագիր է նախատեսված: Սուբվենցիոն ծրագրերի շնորհիվ համայնքը կիսով չափ չի զգում ֆինանսական բեռը, իսկ խոշորացման շնորհիվ մեկտեղված բյուջեն ողջ համայնքին հավասարաչափ զարգանալու հնարավորություն է տալիս»,- ասում է Հունան Ռուբենյանը:
Նրա կարծիքով՝ նախկին փոքր համայնքները, որոնց բյուջեն դեռ «երեկ» բավականացնում էր միայն վարչական աշխատողների աշխատավարձերին, այսօր բազմաթիվ ծրագրեր են իրականացվում:

Օրինակ, Սևաբերդ բնակավայրի տարեկան բյուջեն եղել է 3,5 միլիոն դրամ, իսկ երկու տարում այդ բնակավայրում իրականացված և ընթացքի մեջ գտնվող աշխատանքների ընդհանուր գումարը 130 միլիոն դրամ է կազմում: Հատիս բնակավայրի բյուջեն մոտավորապես 7 միլիոն դրամ էր, բայց, ինչպես նշում է համայնքի ղեկավարը, միայն ջրագծերի վրա 34 միլիոն դրամ է ծախսվել:

Բացի ջրագծերի նորոգումից և ջրաչափերի տեղադրումից՝ Հատիսում կառուցվել է ամենօրյա ջրի կարգավորիչ ջրամբար, ինչպես նաև վերանորոգվել է բնակավայրի վարչական շենքը, որտեղ տեղակայված են գյուղական նշանակության տարբեր կենտրոններ, օրինակ՝ բուժկետը:

Զովաշենի գյուղամիջում բնակիչները քննարկում են օրվա իրադարձությունները

«Խոշորացումից հետո ամեն ինչ լավ է, մեր գյուղում մի աղքատ ընտանիք չկա,- ասում է Զովաշենի բնակիչ Դավիթ Սահակյանը,- **«բոլոր ճանապարհներն ասֆալտապատվել են, երկու երթուղային է աշխատում՝ տրանսպորտի խնդիր չկա»:**

Զովաշենցի Դավիթ Սահակյանը թոռնուհու հետ

Բնակավայրի միակ խնդրիրը, որ բարձրայնում է Դավիթը, չգործող դպրոցի ոչ բարվոք վիճակն է. բնակիչները, սակայն, հուսով են, որ մոտ ապագայում այն կվերանորոգվի և կվերաբացվի:

Զովաշենի բնակիչ Աշոտ Մանավազյանը

Դավիթ Սահակյանի համագյուղացի Աշոտ Մանավազյանը թոշակառու է. այսօր տեսնում է համայնքների միավորումից հետո գյուղին հատկացվող ուշադրությունն ու տարվող աշխատանքները, որոնցից գոհ է. **«Կենդանիների համար խմոցներ են դրել, ջրագծերն են անցկացրել, տրանսպորտն աշխատում է, գազը կա, ջուրը կա. նորմալ է»:**

Կենդանիների համար խմոցներ տեղադրվել են Ակունք համայնքի տարբեր բնակավայրերում, որոնց շնորհիվ ավելացել է խոշոր եղջերավոր անասունների կաթնատվությունը՝ այդպիսով նպաստելով համայնքում անասնապահության և անասնաբուծության զարգացմանը:

2019 թվականի դեկտեմբերից Զովաշենում գործում է համայնքային կենտրոն, որը կառուցվել է բարերարների աջակցությամբ և նպաստում է ոչ միայն ժամանցի հետաքրքիր կազմակերպմանը, այլև երեխաների դաստիարակության և կրթության խիստ կարևոր գործին: Կենտրոն հաճախող շուրջ 20 երեխա այստեղ գիրք է կարդում, պատրաստում դասերը, իսկ տարեցները շախմատ ու շաշկի են խաղում, ընթերցում:

Զովաշենի համայնքային կենտրոնն ու կենտրոնի աշխատակցուհի Արաքսյա Հակոբյանը

Արաքսյա Հակոբյանը աշխատում է Զովաշենի համայնքային կենտրոնում: 2020 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարան և ուսմանը զուգահեռ շարունակում է նաև աշխատել կենտրոնում՝ կրթելով երեխաներին և հոգալով մեծահասակների ժամանցի կազմակերպումը:

Կապուտան բնակավայրում վերանորոգվել է մանկապարտեզը: Վերանորոգման համար ծախսվել է մոտ 10 անգամ ավելի գումար, քան գյուղի տարեկան բյուջեն մինչև միավորումը: Այսօր մանկախպարտեզն արդեն պատրաստ է ընդունել 60 երեխա ոչ միայն Կապուտանից, այլև հարակից բնակավայրերից:

Կապուտան բնակավայրի մանկապարտեզի հարակից տարածքի բարեկարգման վերջին աշխատանքներն են տարվում

Կապուտան բնակավայրի վարչական ղեկավար Սերոբ Միքայելյանն ուրախ է, որ բնակավայրը, համայնքների միավորման արդյունքում, զարգացման նոր հնարավորություններ է ստացել



Կապուտան բնակավայրի վարչական ղեկավար Սերոբ Միքայելյանն ուրախ է, որ բնակավայրը համայնքների միավորման արդյունքում զարգացման նոր հնարավորություններ է ստացել: Այստեղ լուծվել է շատ կարևոր՝ խմելու ջրի և արոտավայրերի ջրարբիացման հարցը: **«Գյուղում ավելացան խոշոր եղջերավոր անասունները ու դրանց կաթնատվությունը: Ինձ թվում է՝ խոշորացումն իր դրական արդյունքը տալիս է»**, - ասում է նա:

Երկար սպասումներից հետո Ակունք բնակավայրը մանկապարտեզ ունի: Ինչպես նշում է մանկապարտեզի տնօրեն Սյուզաննա Աթանեսյանը, որպես խոշորացված համայնք՝ մանկապարտեզի դռները բաց են ոչ միայն Ակունքի, այլև հարակից բնակավայրերի երեխաների առջև:

Համայնքի միավորումից հետո Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների աջակցությամբ Ակունքում հիմնվել է Քաղաքացիների սպասարկման գրասենյակը, որի նպատակն է «մեկ պատուհան» սկզբունքով քաղաքացիներին բարձրորակ ծառայությունների մատուցումը: Քաղաքացիներին ծառայությունները տրամադրվում են ինչպես գրասենյակում, այնպես էլ համայնքի յուրաքանչյուր բնակավայրում՝ օպերատորների միջոցով:

ՔՍԳ-ի առաջատար մասնագետ Սուսաննա Աբրահամյանն ասում է. «Գրասենյակի աշխատանքի նպատակն է ապահովել համայնքապետարանի թափանցիկ աշխատանքը, ինչպես նաև ավելի սերտացնել համայնքի բնակիչների և համայնքապետարանի միջև կապը: Եթե նախկինում քաղաքացին չէր կողմնորոշվում՝ իր խնդրով ում դիմել, ապա այսօր այդ խնդիրը լուծված է: Այս գրասենյակով կոտրել ենք նախկինում գործող կարծրատիպերը»:

Քաղաքացիների սպասարկման գրասենյակում աշխատանքային եռուզեռ է

ՔՍԳ-ի առաջատար մասնագետ Սուսսաննա Աբրահամյանն է

Համայնքում կան նաև այլ էական ձեռքբերումներ. գազաֆիկացվել է Սևաբերդ բնակավայրը, այստեղ համայնքային զարգացման հնգամյա պլանով կառուցվում է ժամանակակից հյուրատուն զբոսաշրջությունը զարգացնելու համար, Զառ բնակավայրում վերանորոգվել է մշակույթի տան տանիքը, և փոխվել են դպրոցի պատուհանները:

Ակունքցիները տեսնում են միավորման շոշափելի արդյունքները և լիահույս են, որ համայնքն էլ ավելի կզարգանա ապագայում:

ԱՊԱՐԱՆ

Ապարան համայնքը գտնվում է Արագածոտնի մարզում՝ Արագած լեռան արևելյան փեշին՝ ծովի մակերևույթից 1,880 մետր բարձրության վրա։ Ապարանը Հայաստանի ամենախոշոր համայնքներից մեկն է. այն ներառում է 21 բնակավայր կենտրոնի՝ Ապարանի հետ միասին՝ Ափնագյուղ, Արագած, Արայի, Չքնաղ, Ձորագլուխ, Հարթավան, Ջրամբար, Կայք, Քուչակ, Լուսագյուղ, Նիգավան, Սարալանջ, Շենավան, Շողակն, Ծաղկաշեն, Թթուջուր, Վարդենիս, Վարդենուտ, Եղիպատրուշ, Երնջատափ։

Վարչատարածքային բարեփոխումների արդյունքում միավորված Ապարան համայնքում հսկայածավալ ծրագրեր են իրականացվել. բարեկարգվել են փողոցներն ու շենքերի արտաքին տեսքը, կանաչապատվել են այգիներն ու պուրակները:

Նիգավանի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Համասփյուռ Պողոսյանը հատկապես ընդգծում է այն մեծ աշխատանքը, որ տարվել է բնակավայրում խմելու ջրի ապահովման ուղղությամբ, ինչը բնակավայրն ինքնուրույն **«փորձում էր, չէր կարողանում անել»**:

«Նիգավան բնակավայրում ստեղծման օրվանից խմելու ջուր չի եղել, մարդիկ օգտվել են ջրհորներից, բայց խոշորացումից հետո հնարավոր եղավ Ապարան բնակավայրից դեպի Նիգավան անցկացնել 7 կմ երկարությամբ և 70 մլն դրամ արժողությամբ ջրագիծ,- հպարտորեն ներկայացնում է Ապարան միավորված համայնքի ղեկավարի տեղակալ Արկադի Կարապետյանը: -

Նույնիսկ եթե վարչական շրջանը 70 տարի շարունակ իր բյուջեն կուտակեր, այդքան գումար չէր կարողանա հավաքել ջուր քաշելու համար»: Նա հավելում է, որ ջրի խնդիրը լուծվել է նաև մեկ այլ՝ Կայք բնակավայրում, իսկ որոշ բնակավայրերում, որոնք երբեք չեն ունեցել ասֆալտապատ ճանապարհներ, լուծվել է նաև այդ խնդիրը:

Ապարան համայնքի ղեկավարի տեղակալ Արկադի Կարապետյանը

Համայնքների միավորումից հետո շատ մեծ է դարձել սոցիալական աշխատողի դերը: Ապարան համայնքում այդ հաստիքը համալրել է Ծահանե Նիկողոսյանը, որը շատ կարևոր առաքելություն ունի կարիքավոր մարդկանց խնդիրները պատկան մարմիններին հասցնելու առումով: **«Կատարում ենք ուսումնասիրություններ սոցիալապես անապահով ընտանիքների վերաբերյալ. տնայցերի ժամանակ ուսումնասիրում ենք նրանց կենցաղը և հնարավորինս փորձում ենք ցուցաբերել աջակցություն, ինչպես դրամական, այնպես էլ խորհրդատվական, առողջապահական, անապահով ընտանիքներում ուսանողների վարձերի զեղչեր և այլ օգնություն»**,- ասում է Ծահանեն:

Ծահանե Նիկողոսյանը Ապարան համայնքի Առողջապահության և սոցիալական բաժնի առաջատար մասնագետ է, կամ ավելի պարզ ասած՝ սոցիալական աշխատողը

Միավորված համայնքի միասնական բյուջեով, ինչպես նաև Կառավարության սուբվենցիոն ծրագրերով մեծ աշխատանքներ են տարվել համայնքի գրեթե բոլոր բնակավայրերում: Անկացվել է գիշերային լուսավորություն, խճալցվել կամ ասֆալտապատվել են համայնքի միջբնակավայրային ճանապարհները, կանոնավոր իրականացվում է աղբահանություն, կառուցվել են ոռոգման ջրատարերի և խմելու ջրի ցանցեր, հեղեղատարերի վրա՝ կամուրջներ, վերանորոգվել և բարեկարգվել են մանկապարտեզները, խաղասենյակներն ու մշակույթի տները, հանդիսասրահները, գրեթե բոլոր բնակավայրերում կառուցվել են ժամանակակից խաղահրապարակներ:

Համայնքում արդյունավետ վարչական ծառայություններ մատուցելու նպատակով կենտրոն բնակավայրում՝ Ապարանում, հիմնվել է «մեկ պատուհան» սկզբունքով գործող Քաղաքացիների սպասարկման գրասենյակը, որը բարձրակարգ ծառայություններ է մատուցում միավորված համայնքի բոլոր բնակիչներին ինչպես կենտրոնում, այնպես էլ համայնքի մյուս բնակավայրերում՝ օպերատորների և վարչական ղեկավարների միջոցով: Քաղաքացին կարող է օգտվել ծառայություններից ինչպես անձամբ, այնպես էլ առցանց: Գրասենյակը հիմնվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից՝ Գերմանիայի, Շվեյցարիայի և ԱՄՆ կառավարությունների համաֆինանսավորմամբ:

Ծենավանի բնակիչ Անանիա Ստեփանյանը գտնվում էր Ապարան բնակավայրում և որոշեց ծառայություններ ստանալ համայնքի կենտրոնում գործող Քաղաքացիների սպասարկման գրասենյակում

Անանիա Ստեփանյանը Ծենավան բնակավայրի բնակիչ է: Չնայած քաջատեղյակ է, որ իր բնակավայրում աշխատող օպերատորը կարող է մատուցել իրեն անհրաժեշտ ծառայությունները՝ այս անգամ որոշել է անձամբ գալ սպասարկման գրասենյակ: «Նախկինում մինչ հասկանում էինք՝ ում դիմենք մեր խնդիրներով, կես օր անցնում էր, իսկ այսօր շատ արագ կարողանում ենք մեր հարցը տեղում լուծել»,- կիսվում է իր փորձով Անանիան:

«Մեկ պատուհանի սկզբունքով սպասարկման ձևը շատ հարմար է: Քաղաքացիներին կարողանում ենք մատուցել վարչական ծառայությունները մեկ վայրում, բայց հատկապես կարևոր է և շատ հարմարավետ այն, որ այժմ քաղաքացիները կարող են նաև առցանց դիմումներ գրել և հետևել դրանց ընթացքին»,- ասում է սպասարկման գրասենյակի աշխատակից, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի մասնագետ Գոհար Ասատրյանը:

Գոհար Ասատրյանն Ապարանի համայնքապետարանի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի մասնագետ է և աշխատում է ՔՍԳ-ում

Երկար ժամանակ համայնքի բնակիչները դեմ էին արտահայտվում համայնքների միավորմանը, սակայն միավորումից չորս տարի անց տեսնում են համայնքի զարգացմանը նպաստող տարաբնույթ բարեփոխումները և նույնիսկ արդեն իրենք են սկսում աջակցել ծրագրերի իրականացմանը:

«Առաջ այդքան էլ կողմ չէի խոշորացմանը, նույնիսկ դեմ էի, անընդհատ իմ հասակակիցների հետ բանավիճում էի, որ այսուհետ չենք կարողանա մեր համայնքին առնչվող խնդիրները տեղ հասցնել: Բայց խոշորացումից մեկ տարի անց տեսանք, որ կառավարումը շատ ավելի արդյունավետ է, և խնդիրների մասին էլ կարողանում ենք բարձրաձայնել, և դրանք շատ արագ գտնում են իրենց լուծումը: Մենք էլ մեր մասնակցությունն ենք ունենում»,- պատմում է Սևակը:

Այդպես իր քաղաքացիական մասնակցային իրավունքն է ապահովել Եղիպատրուշ բնակավայրից Սևակ Մաթևոսյանը, ով երիտասարդական ավյունով իրականացնում է բնակավայրի զարգացմանը միտված զանազան ծրագրեր և ներգրավում իր ընկերներին:

Եղիպատրուշ բնակավայրից Սևակ Մաթևոսյանը

Իսկ Զորագլխի բնակիչ Նվեր Ավետիսյանը սեփական նախաձեռնությամբ և համայնքապետի համաձայնությամբ լայնացրել է բնակավայրի մայթերը, բարեկարգել գյուղը. **«Համայնքապետարանն աջակցեց շինանյութով՝ ցեմենտ, ավազ, և մենք բարեկարգեցինք և ավելի շքեղ դարձրեցինք գյուղը**,- ասում է նա: - **Այս պահին մի քիչ ոռոգման ջրի խնդիր կա, քանի որ մինչև գյուղ հասնելը ջրի կորուստ է լինում, բայց հույս ունենք, որ, ըստ հերթականության, այդ հարցին էլ լուծում կտրվի»:**

Զորագլուխ բնակավայրից Նվեր Ավետիսյանը

Ապարան համայնքի այն ճանապարհները, որոնք դեռ չեն ասֆալտապատվել՝ բարեկարգվում են երկրորդային ասֆալտով

Ապարանի տարածքը հետաքրքրություն է ներկայացնում տարբեր ներդրողների համար: Օրինակ, Լուսագյուղ բնակավայրը տարբերվում է իր արտաքին տեսքով՝ ժամանակակից խաղահրապարակներ ու պարսպապատ տներ, նորոգված տանիքներ ու նոր անտառի հեռանկարով տնկիներ:

Համայնքի ղեկավարի տեղակալը նշում է, որ փորձում են ճիշտ համակարգել աշխատանքներն ու համայնքային բյուջեն ծախսել նպատակային:
Ջրամբարը թեպետ Ապարան համայնքի ամենափոքր վարչական տարածքն է, սակայն ամենահարուստն է ջրային պաշարներով: Այստեղ է գտնվում Ապարանի ջրամբարը, որը նաև գբոսաշրջային մեծ հետաքրքրություն է ներկայացնում՝ հանդիսանալով հանգստյան գոտի: Ջրամբարը կառուցվել է 1962-1967 թթ.: Մակերեսը 7,9 քառակուսի կիլոմետր է: Լիճը սնվում է Քասաղ գետի, Լուսագյուղ, Վարդենիս, Թթուջուր, Եղիպատրուշ, Քուչակ գետակներից և մթնոլորտային տեղումներից և օգտագործվում ոռոգման համար:

21 բնակավայր ներառող Ապարան համայնքն այսօր նոր շունչ է ստանում: Համայնքում կյանքն ակտիվացել է, շինաշխատանքները՝ ևս: Վաղ առավոտից այստեղ լսվում է շինարարական աղմուկ: Համայնքը ոտքի է կանգնում:

«Եթե այդ բոլոր բարեփոխումները հասնում են գյուղացուն, գյուղացին երբեք չի լքի իր համայնքը»,- ասում է Նիգավանի բնակիչ տիկին Համասփյուռը:

ԱՐԵՆԻ

Միավորված Արենի համայնքը գտնվում է մայրաքաղաքից 106, Վայոց Ձորի մարզկենտրոնից՝ Եղեգնաձորից՝ 16, իսկ ՀՀ պետական սահմանից ուղիղ գծով 5 կիլոմետր հեռավորության վրա: Համայնքը ներառում է Արենի, Ագարակաձոր, Աղավնաձոր, Արփի, Գնիշիկ, Ելփին, Խաչիկ, Չիվա, Ռինդ բնակավայրերը՝ Արենի կենտրոնով:

Բնակչությունը մոտ 12,000 է: Վարչական տարածքի ռելիեֆը կտրտված է՝ ցածրադիր. հարթավայրայինից՝ Արենի, Արփի, Ագարակաձոր, մինչև բարձր լեռնային՝ Գնիշիկ, Խաչիկ բնակավայրեր:

Իր հարուստ պատմամշակութային և բնական հուշարձաններով, կենսաբազմազանությամբ, խաղողի տեսակներով ու դրանից ստացվող բարձրակարգ գինով Արենի համայնքը հավակնում է զբոսաշրջային կարևոր կենտրոն դառնալ:

Այս հարցում խիստ նպաստավոր պայմաններ ստեղծեց համայնքի միավորումը, որի շնորհիվ ուշադրությունը կենտրոնացավ համայնքային ենթակառուցվածքների վերականգնման և ստեղծման վրա. փոխվեցին բոլոր էլեկտրալարերը, լուսավորության նոր համակարգ ներդրվեց բնակավայրերում, անցկացվում է մալուխային ինտերնետ կապ, ասֆալտապատվել և բարեկագրվել են ներհամայնքային բոլոր ճանապարհները:

Արենիի հնարավորություններն ու անելիքներն զբոսաշրջության ոլորտում բազմազան են, ուստի միավորումից հետո Արենիի համայնքապետարանը հատուկ ուշադրություն սկսեց դարձնել զբոսաշրջությանը և նշանակեց համայնքի առևտրի, գովազդի և տուրիզմի զարգացման պատասխանատու:

Միայն Արփի-Չիվա-Աղավնաձոր հատվածի ճանապարհաշինության վրա 2019 թվականին ծախսվել է 110 մլն դրամ: Օրինակ, Աղավանաձորի մի թաղամաս, որն անկախացումից ի վեր ոչ մի ասֆալտապատ ճանապարհ չէր ունեցել, այսօր ամբողջովին ասֆալտապատված է:

Հարթեցվում և ասֆալտապատվում են հանդամիջյան և ներհամայնքային ճանապարհները

Նորայր Գրիգորյանն Արենի համայնքի առևտրի, գովազդի և տուրիզմի զարգացման պատասխանատուն է

Նորայր Գրիգորյանը, ով Արենի համայնքի տվյալ ոլորտի պատասխանատուն է, կազմում է զբոսաշրջության զարգացման ռազմավարություն, համայնքի ղեկավարի հետ հետևողականորեն իրականացնում ռազմավարության դրույթները:

«Վերջին երկու տարվա ընթացքում համայնքապետարանը ստեղծել է ակտիվ խմբեր բոլոր բնակավայրերում, որոնք տուրիզմի զարգացմանը միտված գործունեություն են ծավալում»,- ներկայացնում է Նորայր Գրիգորյանը:

Արենի միավորված համայնքի ղեկավար Հուսիկ Սահակյանն է

Ինչպես համայնքի բնաշխարհն է բազմազան, այլնպես էլ խնդիրներն ու կարիքները: Միավորումից հետո համայնքի ղեկավարը ձեռնամուխ եղավ կարիքների ուսումնասիրմանն ու խնդիրների վերհանմանը:
Արենի համայնքի ղեկավար Հուսիկ Սահակյանը պատմում է, թե ինչպես սկսեցին համայնքի զարգացման աշխատանքները. **«Խոշորացումից անմիջապես հետո տեղերում կազմակերպեցինք քննարկումներ բնակավայրերի բնակիչների հետ, ու բարձրացված հարցերին, ըստ առաջնահերթության, սկսեցինք լուծումներ տալ»:**

Ամեն բնակավայր ունի իր առանձնահատկությունը, և ըստ այդմ էլ մշակվում է ռազմավարություն. **«Գյուղ կա, որ պետք է անասնապահության զարգացումը խթանել, գյուղ կա՝ խաղողագործությունը, մյուս գյուղում էլ՝ զբոսաշրջությունը»**,- ասում է համայնքի ղեկավարը:

Ու բոլոր բնակավայրերում սկսվեցին միաժամանակյա աշխատանքները. խմելու և ոռոգման ջրագծերի, կոյուղագծերի կառուցում, կապտաժների նորոգում, ճանապարհների բարեկարգում, փոսալցում և ասֆալտապատում, լուսավորության ցանցի նորոգում, գազաֆիկացում, պուրակների և մանկապարտեզների կառուցում ու վերանորոգում:

Արենի համայնքում իրականացվում են կապտաժների, ջրագծերի կառուցման, նորոգման լայնածավալ աշխատանքներ

Եթե նախկինում փոքր բնակավայրերին շատ ուշադրություն չէր դարձվում, այսօր հենց նրանք են շահում, հատկապես ՀՀ կառավարության սուբվենցիոն ծրագրերով իրականացվող բարեփոխումների արդյունքում: **«Խոշորացման առավելություններից մեկն էլ դա է, որ կարողանում ենք փոքր գյուղերում մեծ հարցեր լուծել: Մինչև խոշորացումը այդ գյուղերը երազել նույնիսկ չէին կարող այն գործերի մասին, որ այսօր են արվում. գյուղ կա, որտեղ մինչև 50 մլն դրամի ներդրում ենք արել»**,- նկատում է Հուսիկ Սահակյանը:

Սահմանապահ Խաչիկ բնակավայրում մշտապես իրականացվում են ամենատարբեր աշխատանքներ: Մայր ջրագծից սկիզբ առնող ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքներն են ընթանում: Համայնքի ղեկավարի տեղեկացմամբ, շինարարական աշխատանքներում հիմնականում ներգրավվում են տվյալ բնակավայրի բնակիչները, եթե մասնագիտական հմտություններ չեն պահանջվում, և հատուկ մասնագետներ չեն հրավիրվում դրա համար: Շինարարական կազմակերպությունների հետ նման պայմանավորվածություն կա:

Խաչիկում ընթանում են ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքները

Օնիկ Զաքարյանն իր մշակած բերքից է հյուրասիրում իր գյուղ հասած հյուրերին

Օնիկ Զաքարյանը Խաչիկ բնակավայրից է. **«Այստեղ մասնավոր ընկերությունները ներդրումներ չեն անում. վտանգավոր գոտի է: Եթե համայնքը չխոշորանար, Խաչիկն այդպես էլ մնալու էր կենտրոնների ուշադրությունից դուրս»:**

Նրա կարծիքը կիսում է Աղավնաձոր բնակավայրի բնակիչ Հենրիկ Պողոսյանը. «Մինչև խոշորացումը 10-12 հաստիք կար, հիմա՝ մեկ-երկու: Դա կոնկրետ ծախս էր, որ հիմա խնայվում է: Ու եթե բախտդ բերեց, համայնքի ղեկավարը բարեխիղճ մարդ եղավ, բոլոր բնակավայրերին էլ հավասարաչափ կնայի: Մեր բախտը բերել է»,- ասում է Հենրիկ Պողոսյանը: Նա հատկապես ուրախ է, որ այսօր վերջապես միջոցներ են ձեռնարկվել վայրի կենդանիներից պաշտպանվելու համար. **«Արջ էր հարձակվում գյուղի վրա, բայց հիմա ցանկապատ են դրել, արջը չի կարողանում մտնել՝ անասուն գողանա, տանի, վմ՞ت է: Շատ լավ է»**,- հարցնում ու ինքն էլ պատասխանում է:

Աղավնաձոր բնակավայրի բնակիչ Հենրիկ Պողոսյանն արդարացված է համարում խոշորացումը

Սահմանապահ գյուղերն իրենց գոյությամբ, ամենօրյա աշխատանքով ու հույսով պահող այս մարդիկ պատմում են արված գործերի մասին: Լուծվել է աղբահանության, ասֆալտապատման և լուսավորության հարցը: Նրանք շատ կարևորում են տրանսպորտի խնդրի լուծումը, որ հնարավորություն է տալիս ապահովել բոլոր բնակավայրերի կապը համայնքի կենտրոնի հետ:

Լուծվել է համայնքի տրանսպորտի խնդիրը. այսօր բոլոր բնակավայրերում որակով և մատչելի ուղևորափոխադրում է իրականացվում

Ժամանակին և որակով աղբահանություն է կատարվում համայնքում: Իսկ ճանապարհները լուսավորված են LED լուսարձակներով

Ագարակաձոր բնակավայրի բուժքույր Փառանձեմ Հակոբյանն էլ խմելու, ոռոգման ջրի հարցի լուծումն է ընդգծում, նաև՝ մանկապարտեզների վերանորոգումն ու հիմնանոգորումը:

Փառանձեմ Հակոբյանը կարևորում է մանկապարտեզի վերանորոգումը

Այս ամենից բացի՝ նա գնահատում է համայնքապետարանում ներդրված Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգն ու Քաղաքացիների սպասարկման գրասենյակի գործունեությունը, որոնց շնորհիվ ինքն իր խնդիրների լուծումը կարողանում է ստանալ հաշված րոպեների ընթացքում, այնինչ նախկինում հսկայական ժամանակ էր ծախսում:

Փառանձեմ Հակոբյանը մոտեցել է Ագարակաձորի բնակավայրի օպերատոր Տիգրանուհի Բաբայանին՝ ծառայությունների համար համայնքապետարան հասնելու փոխարեն

Տիգրանուհի Բաբայանն Ագարակաձոր բնակավայրի օպերատորն է և Արենիի համայնքապետարանի առաջատար մասնագետը: Հենց նրա շնորհիվ են ագարակաձորցիները մի տեղեկանքի համար Արենի հասնելու պարտավորությունից ազատվել:

«Ինչ հարց լինում է՝ զանգում եմ համայնքապետարանի համապատասխան մասնագետին, ճշտում եմ, եթե խնդիր է լինում, ես եմ գնում, լուծում»,- պատմում է Տիգրանուհին:

Գագիկ Կարապետյանը
Արենի համայնքապետարանի
առաջատար մասնագետն է, ով
համակարգում է բնակավայրերի
հետ կապը:

Արենի համայնքը
դրականորեն առանձնանում
է նաև ինքնակառավարման և
որոշումների կայացման գործում
երիտասարդների ակտիվությամբ:

Քաղաքացիների սպասարկման գրասենյակն է: Փոքրիկ, բայց ջերմ այս սենյակում լուծվում են
քաղաքացիներին հուզող բոլոր հարցերը

Արփինեն՝ իր արհեստանոցում

Արփինե Մաթևոսյանը համայնքի
ակտիվ երիտասարդներից
մեկն է: Երևանում ուսում և
մասնագիտություն ստանալուց
հետո վերադարձել է հայրենի գյուղ
և սկսել իր ձեռքբերածը փոխանցել
փոքրերին: Այսպես, ստեղծել է
գողտրիկ արհեստանոցը, որտեղ
ավելի քան հիսուն երեխա ոչ
միայն ծանոթանում է կիրառական
արվեստի հմտություններին, այլև
հետաքրքիր անցկացնում իր օրը:
Իսկ համայնքի երիտասարդների
համար էլ հիանալի հավաքատեղի
է: Արփինեն իր ընկերների հետ
նաև մասնակցում է համայնքի
կառավարման գործին՝ նպաստելով
նոր գաղափարների և ծրագրերի
իրականացմանը:

Համայնքում գործում է նաև
քայլարշավորդական ակումբ, որն
ակտիվ են պահում համայնքի
երիտասարդները: Ընդհանրապես,
համայնքը չափազանց աշխույժ է,
ինչի արդյունքում ավելանում են
մասնավոր ընկերությունների և
անհատների ներդրումները:

Արենի համայնքի ղեկավար
Հուսիկ Սահակյանն իր
ղեկավարած համայնքը
համարում է ցուցադրական,
օրինակելի և հրավիրում բոլոր այն
մարդկանց, ովքեր կասկածներ
ունեն կառավարման այս ձևի
առնչությամբ, գալ, տեսնել բոլորովին
նոր որակ, զարգացման նոր տեմպեր
որդեգրած Արենի համայնքը:

ԲԵՐԴ

Հայ-ադրբեջանական պետական սահմանից ուղիղ գծով՝ 10, մայրաքաղաքից՝ 202, իսկ Տավուշի մարզկենտրոն Իջևանից 63 կմ հեռավորության վրա տարածվում է Բերդ միավորված համայնքը։

Այն ներառում է 17 բնակավայր՝ Բերդ, Արծվաբերդ, Այգեպար, Այգեձոր, Իծաքար, Մովսես, Նավուր, Ներքին Կարմիր Աղբյուր, Նորաշեն, Չինարի, Չինչին, Չորաթան, Պառավաքար, Վերին Կարմիր Աղբյուր, Վերին Ծաղկավան, Վարագավան և Տավուշ։ Համայնքն ունի ավելի քան 32 հազար բնակիչ։ Զարգացած է սննդի արդյունաբերությունը։ Բնակչությունը զբաղվում է նաև անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, այգեգործությամբ, խաղողագործությամբ, ծխախոտի և կարտոֆիլի մշակմամբ։ Համայնքների միավորման արդյունքում այստեղ հնարավոր է դարձել լուծել այնպիսի գերակա խնդիրներ, որոնք նախկինում դժվար թե իրականացվեին փոքր համայնքների սահմանափակ բյուջեներով։

Բերդ համայնքի ղեկավար
Հարություն Մանուչարյանը

«Այսօր աշխատանքներ են կատարվում այնպիսի բնակավայրերում, որոնք տասնամյակներով չէին կարողանալու իրենց փոքր բյուջեով նմանատիպ գործեր անել»,- ասում է համայնքի ղեկավար Հարություն Մանուչարյանը:

Նա նշում է, որ համայնքում մոտ 2 միլիարդ դրամի աշխատանքներ են իրականացվում թե՛ պետական ծրագրերով, թե՛ սուբվենցիաներով, թե՛ համայնքում գործող միջազգային և հասարակական կազմակերպությունների միջոցով:

Բերդում ակտիվացել է շինարարությունը, համայնքի տարբեր բնակավայրերում կառուցվել են պաշտպանիչ պատեր, առկա հենապատերը կապիտալ վերանորոգվել են: Հատկանշական է, որ այստեղ շինարարական աշխատանքներում ներգրավել են համայնքի գործազուրկ անձանց՝ փորձելով այդկերպ ինչ-որ չափով լուծել նրանց սոցիալական խնդիրը:

Համայնքի տարբեր բնակավայրերում կառուցվել են պաշտպանիչ պատեր, առկա հենապատերը կապիտալ վերանորոգվել են:

Առաջնահերթ լուծվել են համայնքի աղբահանության և գրեթե ամբողջությամբ ջրի խնդիրները: Նավուր բնակավայրի բնակիչ Յուրի Քոսակյանի համար միավորումից հետո կատարված բարեկարգումները շոշափելի են: **«Ջրատար խողովակներն ամբողջությամբ փոխվել, վերանորոգվել են: Տեղադրվել են ջրաչափեր: Նախկինում Նավուրի մի քանի թաղամասի բնակիչներ ջուր չունեին, մեքենայով այլ վայրից էին բերում, սակայն այսօր խնդիրն արդեն լուծված է»**,- մտաբերում է Յուրի Քոսակյանը:

Չինչին բնակավայրի մանկապարտեզի դաստիարակչուհի Նինա Գաբրիելյանը հավատով է լցվում, երբ տեսնում է գյուղում իրականացվող բարեփոխումները: Նրա համար հատկապես կարևոր էր տրանսպորտային համակարգի ներդրումը. **«Հիմա մենք ունենք դեպի (նախկին - խմբ.) շրջկենտրոն տանող միկրավտոբուս, որը նախկինում չունեինք: Ստիպված տաքսիներից էինք օգտվում, ինչը բավականին թանկ էր գյուղացու համար»:**

Նինա Գաբրիելյանն է՝ Չինչինի մանկապարտեզի դաստիարակչուհին

Նա ասում է, որ տաքսիով երթևեկելու պարագայում մեկ ուղղության համար վճարում էին 1,500 դրամ, իսկ միկրոավտոբուսի մեկ ուղղության արժեքը 200 դրամ է: Շրջկենտրոնի հետ կապող միկրոավտոբուսը գործում է օրը երկու անգամ:

Համայնքի նոր միկրոավտոբուսն է, որի ուղևորավճարը 200 դրամ է մեկ ուղղության համար

Չինչինի վերանորոգված մշակույթի տունն է

Վերանորոգվել է Չինչինի նախկինում հրդեհված մշակույթի տունը՝ դառնալով գեղեցիկ զբոսաշրջային վայր, ինչպես նաև Նորաշենի մշակույթի տան տանիքը, ասֆալտապատվել, բարեկարգվել և կապիտալ վերանորոգվել են բնակավայրի գլխավոր և հանդամիջյան ճանապարհները: Համայնքի 70 կմ երկարությամբ LED լուսարձակներով լուսավորության ցանց է անցկացվել՝ ապահովելով համայնքի գիշերային լուսավորությունը:

Միջազգային դոնոր կազմակերպությունները համայնքին տրամադրել են նոր սերնդի մի քանի միավոր տեխնիկա, ինչի շնորհիվ հողագործական գրեթե ամբողջ աշխատանքը կատարվում է տեխնիկայով. գերանդիով կամ ձեռքով հողագործությամբ զբաղվող գյուղացի էլ գրեթե չկա:

Իծաքարի բնակիչ Գարեգին Օհանյանը վարչական ծառայություններ ստանալու համար դիմել է իր բնակավայրի օպերատորին՝ Արմինեին, ով անմիջապես տրամադրում է անհրաժեշտ տեղեկանքը

Վարչատարածքային բարեփոխումների արդյունքում Գերմանիայի, Շվեյցարիայի և ԱՄՆ կառավարությունների ցուցաբերած աջակցության շնորհիվ Բերդում հիմնվել է Քաղաքացիների սպասարկման գրասենյակ, որը «մեկ պատուհանի» սկզբունքով ծառայություններ է մատուցում համայնքի բնակիչներին: Գրասենյակը օրական մոտ 70-80 բնակչի է սպասարկում:
Իսկ Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը հեշտացրել է ողջ փաստաթղթաշրջանառությունը:
Իծաքարի բնակիչ Գարեգին Օհանյանի համար էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումից հետո բավականին ժամանակ է խնայվում, քանի որ բնակավայրի բնակիչներն այսօր բազմաթիվ ծառայություններ ստանում են իրենց բնակավայրում կամ առցանց՝ առանց Բերդ հասնելու անհրաժեշտության. **«Ամեն ինչը տեղում արվում է՝ տեղեկանքը, հողի հարկը, ջրի մուծումները ... շատ լավ է, որ այստեղ կա գրասենյակ... էլ Բերդ (կենտրոն) չեմ իջնում, շատ ա օգնում»,** - ասում է Գարեգինը:
Իսկ նույն բնակավայրի օպերատոր Արմինե Գրիգորյանը շեշտում է, որ բացի այն, որ քաղաքացիները կարող են բոլոր գործարքները կատարել տեղում, տեղեկատվական համակարգի միջոցով նաև աշխատանքն է դարձել ավելի թափանցիկ ու մատչելի:

Բերդ համայնքի Քաղաքացիների սպասարկման գրասենյակն է, որտեղ քաղաքացիներին աշխատակիցները տրամադրում են ծառայություններ՝ «մեկ պատուհան» սկզբունքով

Սահմանամերձ բնակավայրերում չեն մոռանում նաև երեխաների անհոգ մանկության մասին: Արծվաբերդ բնակավայրի 120 փոքրիկ այսօր հաճախում է գեղեցիկ, բարեկարգ և անհրաժեշտ պայմաններով ապահովված մանկապարտեզ: Արծվաբերդում մանկապարտեզ հաճախել ցանկացող երեխաներն այնքան շատ են, որ նախատեսվում է կառուցել երկրորդ մանկապարտեզը: Բացի այդ, երեխաների համար կառուցվել են ֆուտբոլի դաշտեր և խաղահրապարակներ:

«Յուրաքանչյուր փոփոխություն սահմանապահ գյուղում շատ կարևոր է ու հաճելի: Մարդիկ գտնվում են ուշադրության կենտրոնում, չնայած նրան, որ ամեն երեկո կրակոցների տակ ենք քնում»,- ասում է Արծվաբերդի մանկապարտեզի դաստիարակչուհի Նելլի Ալիխանյանը, որը բնակավայրի պայծառ ու լուսավոր ապագան կապում է երիտասարդ սերնդի հետ:

Արծվաբերդի մանկապարտեզի դաստիարակչուհի Նելլի Ալիխանյանը բնակավայրի պայծառ և լուսավոր ապագան կապում է երիտասարդ սերնդի հետ

Վերին Կարմիր Աղբյուրի բնակիչ Հրանտ Մխիթարյանը հպարտորեն նշում է, որ իրենց համայնքը ուսուցիչների կարիք չունի, քանի որ երիտասարդներն ուսում ստանալուց հետո պարտադիր վերադառնում են հայրենի տուն. **«Եթե երիտասարդությունը կա, ուրեմն կյանքը կա և հետաքրքիր ձևով շարունակվում է»**: Նա վստահեցնում է՝ համայնքում կատարված փոփոխությունները մարդկանց հավատ են ներշնչում, որ իրենց հետևում կա համայնք, պետություն, որը մտածում է իրենց մասին:
«Այս կերպ շարունակվելու դեպքում քաղաքի և գյուղի տարբերությունները չնչին կլինեն»:

ԳԼԱՁՈՐ

Վայոց Ձորի մարզի հյուսիս-արևելյան հատվածում՝ քաղաքամայր Երևանից 120 կմ հեռավորության վրա, տարածվում է Գլաձոր միավորված համայնքը: Այն ներառում է Գլաձոր, Վերնաշեն և Գետափ բնակավայրերը: Համայնքի բնակչությունը՝ ավելի քան 6,500 մարդ, զբաղվում է գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, այգեգործությամբ և խաղողագործությամբ: Կլիման մերձարևադարձային է, չոր, ցամաքային: Ամռանը շոգ է, ձմռանը՝ ցուրտ:

Օրերը Գլաձորում ակտիվ են՝ մանկական աշխույժով ու տեղական խաղողից պատրաստված գինով, պատմամշակութային վայրերի այցելություններով ու ավելի լավ ապագային գործով պատրաստվելով:

Նորիկ Մկրտչյանը մանկավարժ է: 16 տարի մասնագիտությամբ զբաղվելուց հետո այսօր փոխել է գործունեության ոլորտը. այժմ զբոսավար է, իր փոքրիկ և հյուրընկալ անկյունում ընդունում է հյուրերի և նրանց հյուրասիրում իր պատրաստած գինին ու մշակած գյուղմթերքները:

Նորիկ Մկրտչյանը նկատում է՝ միավորված համայնքի բյուջեն թույլ է տալիս տարբեր ծրագրեր իրականացնել և համայնքը զարգացնել

Տեղացի զբոսավարը սիրով և հպարտությամբ է ներկայացնում իր համայնքի ինչպես մշակութային կոթողներն ու ավանդույթներն, այնպես էլ արդեն արված գործերն ու գեղեցիկ ապագայի սպասումները: Որպես նախկինում Գլաձորի գյուղապետի օգնական-քարտուղար՝ Նորիկ Մկրտչյանը նկատում է. **«Համայնքի միավորումից հետո, մեծ բյուջեի մեծ հնարավորությունների պայմաններում այժմ ավելի հետաքրքիր ու օգտակար, գլոբալ ծրագրեր են իրականացվում: Այն ժամանակների բյուջեն թույլ չէր տալիս հետաքրքիր ծրագրեր իրականացնել»**:

Գլաձոր համայնքը խնդիրների լուծման իր մարտավարությունն է որդեգրել. իրականացնում է ոչ թե մեկ խոշոր ծրագիր և սպառում համայնքի ողջ բյուջեն, այլ կենսական անհրաժեշտության, առաջին հայացքից մանր թվացող խնդիրներ լուծելով՝ գնում է դեպի խոշորները: Այսպես, ողջ համայնքում հանդամիջյան և գյուղամիջյան գրեթե բոլոր ճանապարհները բարեկարգվել են: Նախկին մեկ համայնքի բյուջեի գումարով միայն մեկ բնակավայրի մի հատված հնարավոր կլիներ ասֆալտապատել:

Համայնքում իրականացվել են ճանապարհների հարթեցման և բարեկարգման աշխատանքներ

Տասնամյակներով չնորոգված ջրագծերը նորացվել են, ու այսօր Գլաձոր բնակավայրում մշտական խմելու ջուր կա: Վերնաշենում ևս շուտով մշտական ջրամատակարարման խնդիրը կլուծվի: 4 տարվա դադարից հետո վերագործարկվել է Վերնաշենի մանկապարտեզը, կառուցվել է խաղահրապարակ, որտեղ խաղում են ոչ միայն մանկապարտեզի սաները, այլև ողջ բնակավայրի մանուկները:

Վերնաշենի վերանորոգված մանկապարտեզն իր հյուրընկալ դռներն է բացել փոքրիկների առջև

Թեհմինե Բաբագուլյանը և Աննա Ավետիսյանը

Համայնքի բնակչուհի Թեհմինե Բաբագուլյանը պատմում է, որ նախկինում չկար խաղահրապարակ, ուղղակի բակ էր, և երեխաները փորձում էին խաղալ ինչով պատահեր: Վերնաշենի մանկապարտեզի օտար լեզվի ուսուցչուհի Աննա Ավետիսյանի համար էլ խաղահրապարակը ոչ միայն երեխաների ժամանցն արդյունավետ կազմակերպելու միջոց է, այլև ծնողների համար միմյանց հետ շփվելու հնարավորություն:

Բաբկեն Մկրտչյանը ձեռնարկատեր է, ապրում և աշխատում է Վերնաշենում: Նա ունի իր փոքրիկ հյուրատնային բիզնեսը, որով կարողանում է հոգալ ընտանիքի հոգսերը: Բայց չի անտեսում նաև համայնքի հոգսը և համայնքին իր տան նման է վերաբերվում, ուրախանում է ամեն նոր ձեռքբերումով և փորձում է օգտակար լինել՝ ինչով կարող է: **«Եթե մարդ տեղափոխվում է նոր տուն, շատ պակասություններ են լինում, որոնք աստիճանաբար կառուցում է, բարելավում: Այդպես էլ համայնքն է, նա էլ մի մեծ ընտանիք է, յուրաքանչյուրս մեր աշխատանքով պետք է աջակցենք այդ ընտանիքի ոտքի կանգնելուն, կայանալուն»**,- ասում է Բաբկեն Մկրտչյանը:

Բաբկեն Մկրտչյանը

Նախքան վարչատարածքային բարեփոխումները գյուղերի խնդիրներին հերթը չէր հասնում, հիմնականում շահում էին մարզկենտրոններն ու մեծ համայնքները: Այսօր փոփոխություններն ավելի քան տեսանելի են: Վերանորոգվել են խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբարները, մեծ աշխատանք է կատարվել ներքին ցանցերի վերակառուցման ուղղությամբ:

Վերնաշենում կառուցվել է օրվա կարգավորիչ ջրամբար

«ՀՀ այն քաղաքացին, որ ծնվել և մեծացել է սահմանափակ հնարավորություններով համայնքում, դատապարտված չէ, որ իր երեխան չկարողանա հաճախել մանկապարտեզ կամ խաղահրապարակ, կամ ինքն ունենա այն առաջնահերթ խնդիրները, որ պիտի վաղուց լուծված լինեին»,- ընդգծում է Գլաձոր համայնքի ղեկավար Արմեն Մովսիսյանը:

Գլաձոր համայնքի ղեկավար Արմեն Մովսիսյանը

Նրա կարծիքով խոշորացումը լուծել է շատ կարևոր հարց. համայնքներին համաչափ զարգանալու հնարավորություն է տվել: **«Բայց հատկապես ճշգրտորեն արված խոշորացումն է արդյունավետ, երբ հաշվի են առնվում աշխարհագրական դիրքը, կարողություններն ու ներուժը, ոչ թե մեխանիկորեն բնակավայրերի միավորումը՝ զուտ խոշորացնելու նպատակով: Փոքր համայնքների համար խոշորացումը այլընտրանք չունի»**,- գտնում է Գլաձոր համայնքի ղեկավարը:

Իսկ պետական աջակցությունն այսօր մեծապես նպաստում է համայնքի զարգացմանը: **«2018 թվականից ի վեր 180-190 մլն դրամի 8 սուբվենցիոն ծրագիր ենք իրականացրել»**,- ասում է Արմեն Մովսիսյանը:

Համայնքում իրականացվել են ճանապարհների հարթեցման և բարեկարգման աշխատանքներ, լուծվում է լուսավորության և գետերի վրա կամուրջների կառուցման խնդիրը:

Վերնաշենում հեղեղատի վրա կամուրջ են կառուցում

Վերանորոգվել են Գլաձոր և Վերնաշեն բնակավայրերի խմելու ջրի ներքին ցանցի առանձին հատվածներ: Սուբվենցիոն ծրագրերով տեղադրվել է Գետափի մշակույթի տան ջեռուցման համակարգը, փոխվել են Գլաձորի մշակույթի տան ներքին և արտաքին դռներն ու պատուհանները, Գետափ բնակավայրը գազաֆիկացվել է, աշխատանքներ են տարվում Գլաձորում:

Սուբվենցիոն ծրագրերով տեղադրվել է Գետափի մշակույթի տան ջեռուցման համակարգը, փոխվել են Գլաձորի մշակույթի տան ներքին և արտաքին դռներն ու պատուհանները

Գետափ բնակավայրի վարչական շենքի տանիքում տեղադրվել են այլընտրանքային արևային ֆոտովոլտային կայաններ, դրենաժային համակարգ



Գետափի բնակիչ Դավիթ Հովսեփյանը հիացած է հատկապես ասֆալտապատման աշխատանքներով. **«Ընտիր ասֆալտ են արել՝ ջրահեռեցման համակարգով, մայթերով: Երկար տարիներ պայքարել ենք, որ գազ ստանանք, համայնքի խոշորացումից հետո իմացել ենք, որ գազ են քաշում մեր փողոցներում»**:

Դավիթ Հովսեփյանը հարազատ Գետափում

Գլաձոր համայնքում իրականացվում է բարձրակարգ աղբահանություն:

Համայնքի աղբատար մեքենայով աղբը ժամանակին տեղափոխվում է

Զարմանալի ճշգրտությամբ համայնքի բնակիչները տիրապետում են արված աշխատանքին: **«Այս տարի 1200 մետրի չափով գազաֆիկացում է տեղի ունեցել, փոխվել և քաշվել են ջրագծեր»**,- պատմում է Գետափ բնակավայրի բնակիչ, մանկավարժ Գայանե Դիլաքյանը, ում համար հատկապես տպավորիչ է եղել իր մանկության երազանքի իրականացումը: **«Ժամանակակից խաղահրապարակ կառուցվեց, մի բան, որ երազանք էր անգամ մեր՝ մեծերիս համար: Ու մենք էլ այսօր հաճույքով վայելում ենք երեխաների խաղահրապարակը»**,- անկեղծանում է տիկին Գայանեն: Փոքրիկներն այստեղ խնդիր չունեն. Գետափի մանկապարտեզում անգամ երրորդ խումբ է բացվել:

Համայնքի միավորման արդյունքում Բոլոր բնակավայրերում կան նմանատիպ խաղահրապարակներ իրականացավ տիկին Գայանեի երազանքը. համայնքում կառուցվեց խաղահրապարակ

Գետափ բնակավայրը գազաֆիկացվել է

Վերանորոգված մարզադպրոցի կարատեի մարզասրահն ու հանդերձարանն են

Համայնքում աշխուժացել է սպորտային կյանքը, վերանորոգվել են Գլաձորի մշակույթի տան կարատեի, պարի խմբակների համար նախատեսված սենյակները, հանդերձարանները:

Մարզասեր երեխաների համար հատուկ տոն է ունենալ ֆուտբոլի այնպիսի դաշտ, որ կերազեն շատ համայնքներ: Գլաձորի համար այն արդեն իրականություն է:

Ծատերի համար նման ֆուտբոլի դաշտ ունենալը երազանք է

Գլաձոր համայնքում հատուկ ուշադրություն է դարձվում սպորտի զարգացմանը

Գլաձոր համայնքում գործում է Քաղաքացիների սպասարկման գրասենյակ: Գրասենյակում ծառայությունները մատուցվում են Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով, որը հնարավորություն է ընձեռում նաև համայնքի այլ բնակավայրերի բնակիչներին գրեթե բոլոր վարչական ծառայությունները ստանալ նաև իրենց բնակավայրում կամ առցանց՝ առանց համայնքապետարան այցելելու:

Քաղաքացիների սպասարկման գրասենյակի հիմնման և տեխնիկապես հագեցման գործում մեծ ներդրում ունեն ԳՄՀԸ-ն և ԾԶՀԳ-ն

Մարինե Հովհաննիսյանն ուրախ է, որ կարողանում է օգտակար լինել հարազատ համայնքի բնակիչներին

Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Մարինե Հովհաննիսյանը տեղեկացնում է, որ գրասենյակը հաճախ լուծում է նաև այնպիսի հարցեր, որոնցով քաղաքացին սովորաբար դիմում է համայնքի ղեկավարին: Խնդիրներին շատ արագ տրվում են լուծումներ:

Եվս մի կարևոր խնդիր, որ կարելի է լուծված համարել համայնքների միավորումից հետո: **«Այս խոշորացմամբ համայնքի բնակչության հավատը հանդեպ տեղական իշխանության մեծանում է՝ կապված տեղական իշխանության հնարավորությունների մեծացման հետ, և ըստ այդմ էլ մեծանում է մասնակցությունը համայնքային խնդիրների կառավարմանը և, ինչու ոչ, նաև լուծմանը»**,- նշում է համայնքի ղեկավար Արմեն Մովսիսյանը:

Հավատն իսկապես վերականգնվել է մարդկանց մոտ, ու թեև մոտ ապագայի մասին երազանքները շատ պարզ են ու կենցաղային, բայց կա վստահություն, որ երազանքը կատարվելու է:

ՇՈՂԱԿԱԹ

Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքը գտնվում է Սևանի լեռների լճահայաց լանջին՝ Արեգունի լեռների հարավ-արևելյան մասից դեպի Արտանիշ թերակղզի տանող ճանապարհին: Համայնքների միավորման արդյունքում ձևավորված Շողակաթ համայնքը ներառում է Աղբերք, Շողակաթ, Արտանիշ, Դրախտիկ, Ծափաթաղ և Ջիլ բնակավայրերը: Կենտրոնը Շողակաթն է՝ նախկին Շորժան: Համայնքի ընդհանուր մշտական բնակչությունը՝ շուրջ 3,500: Հիմնական զբաղմունքը՝ անասնապահություն, այգեգործություն, բանջարաբուծություն, հացահատկի և կերային կուլտուրաների մշակում:

Համայնքը ձևավորվել է 2017 թվականին: Տարբեր ծրագրերի՝ հատկապես ՀՀ կառավարության սուբվենցիոն հատկացումների շնորհիվ վերջին երկու տարում շոշափելի փոփոխություններ են եղել: Համայնքի բոլոր 6 բնակավայրերն այսօր զարգանում են համահունչ: «Իսկ ճիշտ կառավարման գաղտնիքը գույքագրումն է, որ արվել է խոշորացումից անմիջապես հետո»,- ասում է համայնքի ղեկավար Սուլիկո Ծուշանյանը, ում գլխավորությամբ ուսումնասիրվել են բոլոր բնակավայրերը, վերհանվել են կարիքներն ու առաջնահերթությունները, և ըստ կարևորության իրականացվել են դրանցից բխող ծրագրերը:

Այսօր համայնքը ձեռք է բերում այն, ինչ չուներ: **«Իսկ ի՞նչ չունեինք. չունեինք գազ, հիմա ունենք: Չունեինք ջրամատակարարման արտաքին ցանց, այս պահին կառուցում ենք 1.8 կմ ներքին ցանց, գործն ընթացքի մեջ է, գույքագրումից առաջ չունեինք մանկապարտեզ, հիմա ունենք մոբայլ մանկապարտեզ՝ 20 երեխայով: Հույս ունենք, որ երեխաների թիվը կավելանա: Դպրոցը շատ վատ վիճակում էր. կատարվել են բազմաթիվ ծրագրեր դպրոցի բարեկարգման ուղղությամբ: Սեփական միջոցներով, մարզպետարանի, կառավարության, տարբեր միջազգային կազմակերպությունների հետ արել ենք այնքան բան, որ վերջին 30 տարում չէր արվել»**,- ասում է Ծողակաթ համայնքի ղեկավար Սուլիկո Ծուշանյանը:

Ծողակաթ համայնքի ղեկավար Սուլիկո Ծուշանյանն է

Ծողակաթ համայնքում հսկայածավալ աշխատանքներ են արվել ներհամայնքային ճանապարհների բարեկարգման և ասֆալտապատման, արտաքին լուսավորության, ջրագծերի արտաքին և ներքին ցանցի բարելավման, գազաֆիկացման ուղղությամբ:

Ասֆալտապատման աշխատանքներն ընթացքի մեջ են

Դրախտիկ բնակավայրում ջրագծերի հիմնանորոգման աշխատանքներ են տարվում

Համայնքը գրեթե ամբողջությամբ լուսավորված է LED լուսարձակներով

Դրախտիկն ամբողջությամբ գազաֆիկացվել է

Դրախտիկ բնակավայրում, օրինակ, գազն Ամանորի նվեր էր: **«2020 թվականը դիմավորել ենք գազով: Մի քիչ դժվար էր առավոտյան վառարանի վրա նախաճաշ պատրաստել ու երեխաներին ճանապարհել դպրոց, իսկ հիմա գազօջախը վառում ենք և շատ արագ հասցնում բոլոր գործերը»**,- պատմում է Դրախտիկի բնակիչ Ծուշանիկ Բեգլարյանը:

Նույն բնակավայրից Լաուրա Մարգարյանն էլ նկատում է, որ բոլոր 6 բնակավայրերին համայնքի ղեկավարությունը հավասարապես է ուշադրություն դարձնում, ինչի շնորհիվ ոչ մեկն անտեսված չի զգում:

Դրախտիկի բնակիչներ Ծուշանիկ Բեգլարյանն ու Լաուրա Մարգարյանը

Աղբերքի դպրոցի ուսուցիչ Պետրոս Մկրտումյանը պատմում է, որ տասնամյակներով ջրի հարց են բարձրացրել, տարբեր խնդիրների մասին են բարձրաձայնել, բայց ոչ մի բան չի փոխվել: Իսկ վերջին տարիներին առաջընթացը նկատելի է: **«Օրինակ, ես 30 տարի դույլերով եմ ջուր կրել, այսօր ծորակը բացում եմ, ջուրը գալիս է: Համայնքային կենտրոնը կառուցվում է, հանդիսությունների սրահը կառուցել են, շուտով ակումբն են ավարտում, նախակրթարան պիտի լինի, մեծահասակների համար՝ ժամանցի վայր, գիշերային լույսերն են սարքել՝ էս վերևի թաղն էլ է գնալու, ներքին թաղն էլ, ճանապարհներն են սարքում, էնպես որ, մենք մեզ էս սարի գլխին մոռացված չենք զգում»**,- ասում է Պետրոս Մկրտումյանը:

Դպրոցի ուսուցիչ Պետրոս Մկրտումյանը

Աղբերքի հանդիսությունների սրահի շինարարական աշխատանքներն՝ ընթացքի մեջ

Երեխաների համար պատրաստվում է առանձին դասարան

Նա նկատում է, որ խորհրդային տարիներին Աղբերքի դպրոցն ուներ 1600 աշակերտ, այսօր սովորում է ընդամենը 53 երեխա: Չնայած հսկայական աշխատանքներին, որ տարվել են բնակավայրում՝ դպրոցի շենքի վերանորոգումը անհեռանկար է դիտվում: **«Փոխվել են դպրոցի պատուհանները՝ ցրտերին ժամանակավորապես դիմակայելու համար: Բայց կառուցվող հանդիսությունների սրահում առանձին դասարան է նախատեսվում պատրաստել երեխաների համար, քանի դեռ դպրոցի հարցը չի լուծվել»**,- ասում է սրտացավ ուսուցիչը:

Արտաքին լուսավորությունը փրկություն է սահմանին շատ մոտ գտնվող բնակավայրի համար: **«Լույսը կյանք է, շատ լավ բան է, մթին ճանապարհը տեսնում ես: Շատ ուրախ ենք, որ վերջապես լուծվեց այդ հարցը»,**- ասում է Արտանիշի տարեց բնակիչ Փնջիկ Աբաղյանը:

Փնջիկ Աբաղյանն ամուսնու հետ

Ջիլ բնակավայրի վերանորոգված մանկապարտեզը՝ ջեռուցման համակարգով

Արտանիշում ոչ միայն լուսավորության հարցն է լուծվել, այլև աղբահեռացման և ջեռուցման: Ջեռուցման համակարգ է ներդրվել նաև Ջիլ բնակավայրի մանկապարտեզում: Ջիլի սեփական եկամուտը մինչև համայնքի միավորումը ընդամենը 7 մլն դրամ էր, իսկ միայն այս մանկապարտեզի ջեռուցման համակարգի վրա ծախսվել է 13 մլն դրամ:

Ջիլի բնակիչ Արփինե Հակոբյանը նկատում է, որ առաջ, երբ ջեռուցում չկար, միայն տաքացվում էր խաղասենյակը, և երեխաները զրկված էին ցերեկային քնից: **«Այսօր ամբողջ մանկապարտեզը ջեռուցվում է»**,-ասում է Արփինեն:

Արփինե Հակոբյանը ուրախ է, որ համայնքը զարգանում է

Ծողկաթի բոլոր բնակավայրերում բացվել են նախակրթարաններ, վաղ զարգացման կենտրոններ:

Այստեղ մտածում են նաև կենդանիների և հովիվների հարմարավետության մասին: Ծափաթաղ գյուղում տեղադրել են ոչ միայն ավանդական խմոցներ, այլև մակատեղիներ և հովվի կացարան, որպեսզի կենդանիներին արոտավայր բերած հովիվը հանգստանալու տեղ ունենա:

Ծափաթաղի մակատեղիներն ու հովվի կացարանը

Բնակիչների սպասարկումն է նաև նոր որակ ստացել: Համայնքում Գերմանիայի և Ծվեյցարիայի կառավարությունների աջակցությամբ հիմնվել է «մեկ պատուհանի» սկզբունքով գործող Քաղաքացիների սպասարկման գրասենյակը: Ներդրվել է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը, որն ապահովում է սահուն փաստաթղթաշրջանառություն բնակավայրերի միջև, համայքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների, ավագանու որոշումների, բյուջեի եկամուտների և ծախսերի կատարողականների մատչելիություն համայնքի վեբ-կայքում և բարձրորակ ծառայությունների մատուցում համայնքի բնակիչներին:

Համայնքի խոշորացումից հետո թափուր հաստիքներ առաջացան, օրինակ՝ սոցիալական աշխատողի և անասնաբույժի: Աշոտ Դեմիրճյանը խորհրդային տարիներին պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել, բայց անկախացումից հետո զբաղվում էր սեփական տնտեսությամբ: Այսօր նրա հմտությունների կարիքն արդեն համայնքն է զգացել ու աշխատանքի վերցրել նրան: Աշոտ Դեմիրճյանը զբաղված է իր սիրած գործով, ինչի համար նաև վարձատրվում է:

Աշոտ Դեմիրճյանը լավատեսությամբ ու ժպիտով նկատում է համայնքում դրական փոփոխությունները

Համայնքի արագընթաց զարգացման համար արվում է նաև խիստ կարևոր գործ՝ միջպետական ճանապարների բարեկարգում ու ասֆալտապատում: Այսօր Սևանը գրեթե ամբողջությամբ շրջապատված է արդեն բոլորովին նոր, որակյալ ասֆալտապատ ճանապարհով, իսկ սա ոչ միայն ռազմավարական նշանակության հարց է, այլև զբոսաշրջության զարգացման հիմնական երաշխիք:

Համայնք բերող ասֆալտապատ ճանապարհը՝ մայրամուտին

«Մոնիթորինգի արդյունքները ցույց տվեցին, որ տրանսպորտային միջոցների հոսքը մոտ 500 տոկոսով աճել է: Եկող տարի այս ճանապարհը շարունակվելու է ևս 20 կիլոմետր և միանալու է Վարդենիսից եկող այն ճանապարհին, որն արդեն կառուցված է, ու այս պարագայում ավարտվում է Սևանի շուրջ օղակը՝ բարձրակարգ ճանապարհներով»,-ասում է Ծողկաթ համայնքի ղեկավար Սուլիկո Ծուշանյանը:

Այսօր համայնքը կամաց-կամաց, բայց վճռական քայլերով վերածվում է փոքրիկ դրախտի՝ Հայաստանի ամենագեղատեսիլ վայրերից մեկում՝ Սևանի ափին՝ հավակնելով դառնալ զբոսաշրջության երանելի կենտրոն:

Սևանի ճանապարհի այդ հատվածը նախկինում մարդիկ կնքել էին շատ հոռետեսական անվամբ. **«Ասում էին՝ դժոխքի ճանապարհ է, բայց այն արդեն փոխվում է. այլևս դրախտի ճանապարհ է»**,- հպարտորեն ընդգծում է համայնքի ղեկավարը:

ԵՂՎԱՐԴ

Մայրաքաղաքից 30 կմ հեռավորության վրա՝ Արա լեռան ստորոտում՝ ծովի մակերևույթից 1,300 մետր բարձրության վրա, տարածվում է Կոտայքի մարզի Եղվարդ միավորված համայնքը՝ Եղվարդ կենտրոնով: Համայնքը ներառում է Զովունի, Արագյուղ, Զորավան, Բուժական և Սարալանջ բնակավայրերը: Համայնքը համեմատաբար երիտասարդ է: Բացառությամբ Եղվարդի և Արագյուղի՝ մյուս բնակավայրերը հիմնադրվել են 20-րդ դարում: Համայնքի՝ մայրաքաղաքին ամենամոտ բնակավայրը Զովունին է, ընդամենը 1 կիլոմետր հյուսիս-արևմուտք: Համայնքի բնակչությունը մոտ 26,000 է, հիմնականում հայեր են և եզդիներ, նաև՝ ռուսներ, մոլոկաններ:

Զովունիի բնակիչ Ազիզ Ավդալյանը խորհրդային տարիներին պահպանության ծառայության պետ էր: Անկախացումից հետո զբաղվում էր անասնապահությամբ, հետո տեղափոխվեց Եվրոպա:

Ազիզ Ավդալյանը երջանիկ ապրում է Զովունի բնակավայրի Ամո եզդիական թաղամասում

Սակայն հայրենիքից դուրս կարողացավ ապրել միայն մեկ տարի ու վերադարձավ իր տուն՝ Եղվարդ. **«Այսօր իմ Հայաստանում եմ: Ծատ հաճելի է, հարազատ ու շատ էլ լավ վիճակում է քաղաքը»**,- պատմում է Ազիզ Ավդալյանը: Նա բնակվում է Ամո եզդիական թաղամասում, այստեղ, ինչպես և ողջ Զովունիում, փոփոխություններն ակնհայտ մեծ թափով սկսել է նկատել համայնքի միավորումից հետո:

Գազատար խողովակները Զովունու որոշ փողոցներ չէին հասնում: Միավորումից հետո խնդիր դրվեց գազը հասցնել յուրաքանչյուրին. խնդիրը դրվեց և լուծվեց

Իսկ որ ամենակարևորն է համարում՝ **«ամբողջ գյուղը գազաֆիկացվել է, ասֆալտապատվել, ջրամատակարարման, լուսավորության հարցերն են լուծվել. կենցաղային սպասարկման հարցերը նորմալ կատարվում են»**:

Եղվարդ համայնքում ամբողջությամբ լուծված է աղբահանության խնդիրը

Զովունիում իրականացվում են կոյուղագծերի նորացման աշխատանքներ

Եղվարդ համայնքում մեծ թափով տեղի է ունենում փողոցների ասֆալտապատում: Հարթեցվում, սղոցված ասֆալտով խճապատվում են հանդամիջյան ճանապարհները

Համայնքում բարեփոխումներն արվում են ըստ անհրաժեշտության և առաջնահերթության: Որոշումների կայացման հարցում մեծ ուշադրություն է հատկացվում բնակիչների մասնակցությանը և կարծիքին:

Եղվարդ համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանը ներկայացնում է, թե ինչ մեթոդով են մշակել աշխատանքների հերթականությունը. **«Միավորումից հետո բոլոր բնակավայրերում կատարեցինք լուրջ ուսումնասիրություններ, հասկացանք բոլոր խնդիրները, բնակիչների հետ քննարկեցինք առաջնային հարցերը և աստիճանաբար սկսեցինք լուծել դրանք»**:

Համայնքի միավորման արդյունքում շահել են հիմնականում փոքր բնակավայրերը, որոնք նախկինում փոքր բյուջեի պատճառով չէին կարողանում լուծել կենսական անհրաժեշտության խնդիրներ:

Եղվարդ համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանը

Գարեգին Խաչատրյանը գոհ է համայնքների միավորման գաղափարն իրենց համայնքում կյանքի կոչելու համար

Սարալանջ բնակավայրի բնակիչ Գարեգին Խաչատրյանը համարում է, որ միավորումը հենց իրենց գյուղի համար էր. **«Ջրամատակարարման խողովակներն են փոխել, հանդիսությունների սրահ են կառուցել, որ ուրախության ու տխրության առիթներով չընկնենք կողքի գյուղերը՝ տեղ փնտրելու: Ասֆալտն արել են, ցերեկային լույսերը դրել են, ամեն բան արել են, մենք շատ գոհ ենք: Մյուսները չգիտեմ, բայց մեզ համար սա փրկություն էր»**,- պատմում է գյուղի ավագներից Գարեգին պապը:

ՀՀ կառավարության սուբվենցիոն ծրագրերով Եղվարդ համայնքում վերանորոգվել և կառուցվել են մանկապարտեզներ, երաժշտական դպրոցներ ու մշակույթի տներ:

Զովունիի վերանորոգված մշակույթի տունն է, որտեղ ներդրվել է ջեռուցման համակարգ և ձեռք են բերվել աթոռներ:

Երեխաները այցելում են նորոգված երաժշտական դպրոցը!

Զովունիի մշակույթի տունը

Զորավանի մանկապարտեզում ավարտվում են վերանորոգման աշխատանքները

Զովունի բնակավայրի վերանորոգված դպրոցը

Զորավանի մանկապարտեզի դիմացի խաղահրապարակում իրենց ուրախ առօրյան են անցկացնում համայնքի փոքրիկները

Եղվարդի թիվ 2 մանկապարտեզի շինարարական աշխատանքները

Զովունիի վերանորոգված մանկապարտեզն է

Եղվարդի թիվ 2 մանկապարտեզի կառուցման աշխատանքները բուռն ընթացքի մեջ են: **«Համայնքում չպետք է լինի նախադպրոցական տարիքի երեխա, որը զրկված լինի մանկապարտեզ հաճախելու հնարավորությունից»**,- կարծում է համայնքի ղեկավարը:

Ընդհանրապես, համայնքը հատուկ ուշադրություն է դարձնում մշակութային դաստիարակությանն ու արվեստների զարգացմանը:

Հատկանշական է Արագյուղ բնակավայրի մշակույթի տան վերանորոգման փաստը: Սուբվենցիոն ծրագրով շուրջ 145 մլն դրամ է հատկացվել պատմամշակութային նշանակության շինությունը հիմնովին վերանորոգելու, գործարկելու համար: Շենքը կառուցվել է հայրենական պատերազմի տարիներին և շահագործման հանձնվել 1946 թ-ին: Ի դեպ, այն կառուցել են բացառապես կանայք. տղամարդիկ ռազմաճակատում էին: Անկախության տարիներին մշակույթի տունը անգործության մատնվեց և մաշվեց՝ ֆիզիկապես ու բարոյապես: Այսօր այն նոր կյանք է ստանում:

Արագյուղի մշակույթի տան վերանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են

Աննա Բաբայանն է՝ Արագյուղի դպրոցի ուսուցչուհին

Արագյուղի դպրոցի ուսուցչուհի Աննա Բաբայանը մեզ հետ զրույցում խիստ կարևորում է հատկապես գյուղերում մշակութային կյանքի զարգացմանը միտված ներկայիս քաղաքականությունը: Ըստ նրա, թեկուզ մեկ խմբակ, մեկ թատրոն, մեկ սպորտային ակումբ գործելով՝ լիովին փոխվում, աշխուժանում է գյուղի ու գյուղացու առօրյան:

Աննա Բաբայանը նկատում է, որ վաղուց հասունացած կենցաղային խնդիրներն են այսօր լուծվում. ասֆալտապատվում են փողոցները, քաշվում է արտաքին լուսավորություն, դպրոցում անցկացվել է լոկալ ջեռուցում, որը տարիների երազանք էր, փոխվել են դռները, լուսամուտները, վերանորոգվել են սանհանգույցները:

Արագյուղի դպրոցում անցկացվեց ջեռուցման համակարգ

Բուժական բնակավայրում ջրամատակարարման խնդիրը լուծելու համար անհրաժեշտ էր ձեռք բերել ոռոգման ջրի պոմպ, ինչը տարիներով հնարավոր չէր լինում կազմակերպել: Այսօր այն ձեռք է բերվել, տեղադրվել և լուծել գյուղացու և գյուղատնտեսության զարգացման համար շատ կարևոր խնդիր:

Ջրային պոմպի տեղադրման աշխատանքները

Կանաչապատվել է հայրենական պատերազմի զոհերին նվիրված հուշարձանի տարածքը, այսօր այն արագյուղցիների և ողջ համայնքի բնակիչների սիրելի վայրերից մեկն է:

Հայրենական մեծ պատերազմի զոհերին նվիրված հուշարձանը Արագյուղում

Բուժական բնակավայրում լուծվել են բազմաթիվ առաջնային խնդիրներ: Ջրամատակարարումն այս բնակավայրի աքիլլեսյան գարշապարն էր, երկու փուլով կառուցվեց երեք կիլոմետր երկարությամբ ջրագիծ՝ էապես բարելավելով ջրամատակարարման տևողությունն ու որակը:

Հիմնանորոգվում է Բուժականի 1,5 կիլոմետր երկարությամբ կենտրոնական փողոցը՝ մայթերով, ոռոգման կիսախողովակներով

Բուժականում հիմնանորոգվեց և բնակիչներին հանձնվեց հանդիսությունների սրահը: Այն ապահովված է անհրաժեշտ պայմաններով և գույքով:

Հանդիսությունների նորաբաց սրահը Բուժականում

Բենիկ Չալիբեկյանն է

«Այսօր էլ 290 մլն դրամ նախագծային արժեքով ասֆալտապատման աշխատանքներ են արվում, հիմնանորոգվում է բնակավայրի 1,5 կմ երկարությամբ կենտրոնական փողոցը՝ մայթերով, ռոգման կիսախողովակներով»,- ասում է Եղվարդ համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանը, որին երկրորդում է Բուժականի բնակիչ, շինարար Բենիկ Չալիբեկյանը՝ պարզաբանելով, թե առաջ ինչու երկար տարիներ նման ծրագրեր չեն իրագործվել. «Դե առաջ փոքր բյուջե էր, **մարդիկ ո՞րը հասցնեին անել էդ չնչին գումարով: Հիմա խոշորացումից հետո իրավիճակը փոխվել է. մեծ գումարներով կարելի է մեծ գործեր անել»**:

Վարսավիր Վանուշ Գալստյանի համար էլ, գործի բերումով, հատկապես կարևոր է ջրամատակարարման որակի և գրաֆիկի բարելավումը: Նախկինում բնակավայրում ընդամենը մի քանի ժամ էր ջուր լինում, իսկ հիմա հակառակն է՝ մի քանի ժամով են կտրում:

Վանուշ Գալստյանը ակտիվ մշակութային կյանքով է ապրում, նաև շներ է խնամում

Եղվարդ համայնքում գործում է Քաղաքացիների սպասարկման գրասենյակ, որը «մեկ պատուհանի» սկզբունքով ամենատարբեր ծառայություններ է մատուցում քաղաքացիներին:

Բացի այդ, վարչական ղեկավարների միջոցով քաղաքացուն էլեկտրոնային եղանակով մատուցվում են գրեթե բոլոր այն ծառայությունները, որոնք տրամադրվում են համայնքապետարան այցելելու դեպքում:

Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առաջատար մասնագետ Անահիտ Մովսեսյանը հպարտորեն ընդգծում է, որ եթե քաղաքացին դիմում է իրենց գրասենյակ, անպայմանորեն բավարարված, խնդիրը լուծված է դուրս գալիս:

Իսկ գրասենյակի գործունեության, մասնագետների վերապատրաստման, ինչպես նաև կահավորման համար նա իր շնորհակալությունն է հայտնում ԳՄՀԸ-ին և ԾԶՀԳ-ին, որոնց շնորհիվ այսօր էականորեն հեշտացել է և՛ իրենց, և՛ բնակիչների կյանքը: Եթե մինչև խոշորացումը, օրինակ, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի բնակիչներն իրենց գույքահարկի կամ հողի հարկի վճարման, տեղեկանք ստանալու համար ստիպված էին այցելել համայնքի կենտրոն, ապա այսօր հնարավորություն ունեն այդ ծառայությունները ստանալ հենց իրենց բնակավայրում:

ՔՍԳ-ում մարդիկ կարող են անանուն կարծիք և առաջարկություն թողնել: Այսպիսով լուծվում է նաև աշխատանքի թափանցիկության խնդիրը

Եղվարդի Քաղաքացիների սպասարկման գրասենյակը

Անահիտ Մովսեսյանն աշխատում է ուժերի գերլարումով, որպեսզի բնակիչները գոհ լինեն սպասարկման որակից

ՔՍԳ մասնագետները վերապատրաստվել են ԳՄՀԸ աջակցությամբ

Արագյուղ բնակավայրի օպերատոր Արմեն Գևորգյանն է

Համայնքապետարանն ունի օպերատոր ամեն բնակավայրում, ում միջոցով արվում է աշխատանքը:

Արմեն Գևորգյանը Եղվարդի համայնքապետարանում գլխավոր մասնագետ է: Նա Արագյուղ բնակավայրի օպերատորն է: Պատմում է, թե որքան են թեթևացել բնակիչների հոգսերը, և որքան ժամանակ է խնայվում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումից հետո: Գոհ է, որ կարողանում է օգտակար լինել համագյուղացիներին:

Համայնքում լուծված է լուսավորության հարցը, կառուցվում, վերանորոգվում և հիմնանորոգվում են խմելու, ոռոգման և կոյուղու ջրագծերը: Վերացվում են ճանապարհների անհարթությունները՝ կատարելով ասֆալտապատում, սղոցված ասֆալտով խճապատում, իրականացվում է կանոնավոր աղբահանություն, և, իհարկե, կանաչապատում ու համայնքի արտաքին տեսքի բարեկարգում:

Եղվարդ համայնքում աշխատանքային եռուզեռ է

Համայնքի բոլոր բնակավայրերի համաչափ զարգացումը ընդհանուր առմամբ համայնքի զարգացման հաջողության գրավականն է, իսկ գաղտնիքը բացահայտում է համայնքի ղեկավարը. **«Ռազմավարությունը հետևյալն է. երկար տարիներ չլուծված խնդիրները վեր հանել և տալ դրանց լուծումները, ինչը, կարծես, մեզ հաջողվել է, և այդ ուղղությամբ շարունակում ենք աշխատել»**:

Երբ կա հստակ մշակված ռազմավարություն, երբ համայնքի բնակիչը մասնակցում է որոշումների կայացմանն ու կրում որոշակի բարոյական պատասխանատվություն, երբ համայնքը զգում է կառավարության աջակցությունն ու իր բաժին աշխատանքի կարևորությունը, ուրեմն համայնքը զարգանում է համաչափ և արագ տեմպերով, ճիշտ այնպես, ինչպես Եղվարդը:

Հապավումների ցանկ

ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԳՄՀԸ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն / GIZ
ՀԿՏՀ	Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԾԶՀԳ	Ծվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԵՆ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՔՍԳ	Քաղաքացիների սպասարկման գրասենյակ

Հրատարակված է
Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից
Ընկերության կենտրոնական գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիր
Հանրապետության 59, 6-րդ հարկ
Երևան, Հայաստան, 0010
Հեռ.՝ +374 (0) 10 51 00 61
Կայք՝ www.giz.de

Պատասխանատու՝ ***Պիեռ Բոնիֆասի***
Հայեցակարգն ու համակարգումը՝ ***Լիկա Մկրտչյանի***
Բովանդակությունը՝ ***Դիանա Մարկոսյանի և Լիկա Մկրտչյանի***
Ձևավորումը՝ ***«Ձետտայումեն» ՍՊԸ-ի***
Լուսանկարները՝ ***Արտյոմ Աղասարյանի***
2021 թ.

© ԳՄՀԸ/GIZ